Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2016թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 12 նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից վեցը՝ Մարզպետունի Ավետիսյանը, Շմավոն Կարապետյանը, Աղասի Հովհանյանը, Մամիկոն Նազարյանը, Ռուստամ Ներսիսյանը և Նորայր Սիրականյանը;
Նիստը վարեց համայնքի ղեկավար Ռ. Սիրականյանը:
Արձանագրեց Գ.Ղազարյանը:
Օրակարգ՝

Հարց-1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ Զեկուցող Ռ.Սիրականյան/,

Օրակարգը քվեարկվեց՝
Կողմ 6, դեմ 0, ձեռնպահ 0:

Ավագանու անդամներ՝

1.Մարզպետունի Ավետիսյան

2.Շմավոն Կարապետյան

3.Աղասի Հովհանյան

4.Մամիկոն Նազարյան

5.Ռուստամ Ներսիսյան

6.Նորայր Սիրականյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Սիրականյան

Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38

29-ը Դեկտեմբերի 2016թ. գ. Վարդաձոր

1417 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Վարդաձոր հեռ. /+374/091550059/
Ալաշկերտի 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի № 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> № 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի № 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի,, անդամների 15.12.2016թ. № 110 դրական եզրակացությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի գլխավոր հատակագծում ՝ իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական 0.0083 հա /կադաստրային ծածկագիր 05-084-0104-0229 / վարելահողը, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորեա՝ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի /հենասյուների՝ 1 միավոր/ կառուցման համար:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղական համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ՝ 6, դեմ՝0, ձեռնպահ՝0:

Ավագանու անդամներ՝
1.Մարգպետունի Ավետիսյան
2.Շմավոն Կարապետյան
3.Աղասի Հովհանյան
4.Մամիկոն Նազարյան
5.Ռուստամ Ներսիսյան
6.Սորայր Միրականյան

Համայնքի ղեկավար՝ Ռոբերտ Միրականյան
Արձանագրող՝ Գուրգեն Ղազարյան